ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար դեզինսեկցիոն ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԷԱՃԾՁԲ-25/08 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025թ. մարտի 03-ին կնքված N ԵՄ-ԷԱՃԾՁԲ-25/08-1 ծածկագրով պայմանագրում 2025թ. մարտի 31-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 2025 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Փոփոխության նկարագրություն՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Ախտահանման կենտրոն» ՓԲԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2025թ. մարտի 31-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է մատուցման ծառայությունների դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2025թ. մարտի 31-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝ 2025թ. մարտի 03-ին կնքված N ԵՄ-ԷԱՃԾՁԲ-25/08-1 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերման պահանջը չի դադարել և մատուցված ծառայությունների ձեռքբերման համար «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 2025 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ**